

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тыфлис. Редакция „Мелк“

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

— Ներքին տեսութիւն: Նամակ Գան-
ձակից: Նամակ Ալեքսանդրապոլից: Նամակ
Խմբագրին: Նամակ Խմբագրին: Ներքին
լուրեր: — Արտաքին տեսութիւն: Հայ
կաթողիկոսների խնդիրը: Գերմանիա: — Մշակիչ
հեռագիրներ: — Յայտարարութիւններ: Տեղեկա-
ցոյց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆԶԱԿԻՑ

19 մարտի

Գանձակի փողոցներում թափառող և եկե-
ղեցիների դռներում դեղերով թէ տեղացի
և թէ օտարաքաղաքացի աղքատների աննա-
խանձելի դրութիւնը դեռ 1876 թվին հարկա-
դրեց մեր քաղաքացի, նրանց թիւը գէթ մա-
սամբ փոքրացնելու նպատակով, կազմել աղքատ-
ների խնամարկութեան արկով Յիշեալ թուով
կազմվեցին ժողովներ, ընտրվեցին հոգաբարձու-
ներ, որոնց պարտքն էր աշխատել կազմել տալով
կանոններ առաջարկել օր հարկին է ի հաստա-
տութիւն, բայց այդ ընտրութիւնը մնաց լոկ
ընտրութիւն: Հոգաբարձուք մնացին առանց
հաստատութեան, կանոնադրութեան ծրագիրն
էլ ընկնելով մի պարտին երկար արկղը այնտեղից
գո՞ւար է դուրս գալիս, աղքատներն էլ իրենց
սովորութեամբ թափառում են ամեն տեղ, և
այնքան են ժողովում եկեղեցիների դռներին-
րում, որ եկեղեցի գնացողներին իրենց պահանջ-
ներով քիչ է մնում յետ փախցնեն, թէ և ընտր-
ված հոգաբարձուները չեն հաստատված այնու-
ամենանիւ հարկաւոր դէպքում իրենց աշխա-
տութիւնը չեն խնայում: Ինչպէս լսում ենք
այժմ դրանց մօտի գումարը հասնում է մօտ
1200 ռուբլու: Աւելորդ չեմ համարում ասել մեր
մի քանի պարտնեիրն, որ նրանք լաւ վարված
կը լինէին, եթէ այդ կանոնադրութեան ծրագիրը
արկղից հանելով հասարակութեան քննադատու-
թեան ենթարկէին:

Որքան յիշում եմ աղքատների խնամարկու-
թեան հոգաբարձուների հետ նոյն 1876 թվին
ընտրվեցին և մեր եկեղեցիների երեցփոխանե-
րին հաշուառեսներ: Այս ընտրութիւնը նոյնպէս
մնաց լոկ ընտրութիւն: Սրանց ընտրութեան
թիւրքն էլ ընկաւ Թիֆլիսի Կոնստանտինոփոլսի
անտակ արկղը: Եւ հաւատարմեամբ եմ, եթէ մեր
հաշուառեսն պարտնեիրը հաստատված լինէին
իրանց պաշտօնի մէջ, մեր երեցփոխանները եր-
բէք չէին համարձակվի ցոյց տալ առաջին
գումարներին չնչին տոկոս, կամ չէին թողնի
որ երեցփոխանի հիւանդութեան ժամանակ
մասնաւոր հաշիւ քննելու ժամանակ 6000 ռուբլ
երևացած գումարը նրա առողջանալուց յետոյ
հասնէր 3—4000 ռուբլու, կամ մի ուրիշ երեցփո-
խանը ասէ եկեղեցական գումարը պարագայ ար-
կղում ընկած է եղել առանց տոկոսի և թէ
կրպակներից ստացվել է զանազան ժամանակ-
ներում զանազան մարդկանցից և 180 ռուբլ: Ու-
մից է ստացվել, որքան ժամանակվայ համար,
այդ ո՞վ է հարցնողը, չեմ կամենում թէ սրանց
և թէ միւսների պակասութիւնները մի առ մի ա-
սել, առանց այն էլ նամակս երկարում է, մեր
հոգեւոր իշխանութիւնն էլ բաւականա՞նում է տես-
նելով հաշուառեսների մատենումը մէկ քա-
նի ճանքի և կոչակարների ստորագրութիւն-
ներ: Վստահանում եմ մեր հոգեւոր իշխանու-
թեան ուշքը հրաւիրել թէ հաշուառեսներ հաս-
տատելու և թէ երեցփոխանների հաշիւները
խստութեամբ նայելու մասին:

Մենք լրագրներում կարդում ենք հրաւերք
աղգայիններին, սուրբ նրաւորութիւն մեծագումար
պարտքի օգնութեան, մինչդեռ նոր կալուածների
եկամուտը վերատեսուչների ձեռքն խաղաղք են

ղարձած, խօսքս մասնաւորեմ, սուրբ երեսա-
ղէմը Գանձակում ունի մէկ քանի կրպակներ:
Նրա վերատեսուչ հանդուցեալ Առաքմա Ափա-
նասեանցը որքան մեղ յայտնի է մինչև 1870
թիւը իր հաշիւները տեղական հոգեւոր իշխանու-
թեան միջոցով հասցրել է սուրբ էջմիածնի
աթոռին: Այնուհետև հանդուցեալը զգուշացաւ,
որ այդ արդիւնքը պէտք է հասնէր սուրբ երե-
սաղէսի և ոչ սուրբ էջմիածնին: Չը նայելով, որ
վերջինս քանի քանիցս պահանջեց նրանից, նա
չը կամեցաւ տալ: Գեռ հաշիւները չը վերջա-
ցրած նա 1877 թվին վախճանվեցաւ: Փանի մեր
սուրբ երեսաղէմի աթոռը այսպիսի նեղ դրու-
թեան մէջ է, հարկ կայ հանդուցեալ Ափառա-
սեանցի ժառանգների վրա, որ օր առաջ վեր-
ջացնելով հաշիւը, գումարը հասցնեն ըստ պատ-
կանելոյն:

Գանձակի գետի ջուրը ամառ ժամանակ
նուազելով քաղաքացիք ընկնում են մեծ նեղու-
թեան մէջ, և որ քաղաքացիք նեղութիւնն չը կը-
րեն 15 տարի պահից առաջ բարձրագոյն մարմ-
նաւոր իշխանութեանց հրամայած է տեղիս քա-
ղաքային ոստիկանութեանը արթուն հսկողու-
թիւն ունենալ և չը թողնել քաղաքից բարձր այ-
գիք տնկել, այլ թէ ցանկացողը կարող է քա-
ղաքից ներքև տնկել: Ինչպէս թղթի վրայի տա-
ռերը մեռած են, այնպէս էլ այդ հրամանը իր
նշանակութեամբ գործադրվում է (չէ որ հէնց
այս մասին էր, որ անցեալ տարի պարտնի մէկը
սպառնում էր միւսին սպանել, եթէ նա կը հա-
մարձակվի այդ մասին կրկնել իր խօսքը): Ինչ-
պէս լսեցի գանձակցիքը տեղական քաղաքային
ոստիկանութեանը օրերումս խնդր են տուել,
որ ամ իրաւունք տայ Պ. Ղ. Ս. Օսանիսեանց
ցին որպէս զի վերջինս իրաւունք ունենայ հըս-
կելու և չը թողնելու գոնէ այսուհետև այգիք
տնկել համաձայն վերոյիշեալ կարգադրութեան:
Չը դիտեմ մերոնք արանով ինչ են ուղում հաս-
կացնել ոստիկանութեանը: Տեսնե՞ք ինչ պա-
տասխան կը ստանան, մինչ պատասխան ստա-
նալը ցանկանում եմ ասել: Թիֆէ համադրված են
մերոնք, որ ոստիկանութիւնը եթէ իր այնքան
մեծ կազմակերպութեամբ չէ կարողանում ա-
ռաջն առնել, պ. Օսանիսեանցը, որ առանց
այն էլ քաղաքային գործերով լեղելված է, կա-
րող է ըստ արժանւոյն հսկել: Եթէ իրաւ մարդ
ընտրելու հարկաւորութիւն կայ ինչի անպատ-
ճառ նրան նեղութիւն տալ: Թիֆէ չէր կարելի մի
ուրիշ աւելի ազատ և գործունեայ անձն ընտրել:

Գանձակում դեռ ևս չարունակվում է ժողով-
ների տեղիս երկսեռ դպրոցներ շինելու համար:
Եթէ չեմ սխալվում անցեալ տարի էլ ժողովե-
ցին, մտածեցին, վճարեցին գետին առնել, որ և
գնեցին 1400 ռուբլով: Այժմ ինչպէս լսեցինք մէկ
քանի պարտնեիր անցեալ չաբաթ ունեցել են
գեր. յաջորդի մօտ նիւտ և հասել են այն եղ-
րակացութեան, որ պէտք է ուսումնարանների
շինութեան համար գնվի գետին և ահա կրկն
չաբաթից աւելի է զանազան կառուածատերերի
առաջարկութիւններ են անում: Մէկին առա-
ջարկում են 6000 ռուբլ, միւսին 7000 ռուբլ մի
ուրիշին 4000 ռուբլ, և ոչ մէկին հետ դեռ չեն
կարողացել առուծախս վերջացնել: Ինչպէս լըս-
վում է այդ գետնի գինը պէտք է տան սուրբ
Յովհաննէս մայր եկեղեցւոյ գումարից, դեռ չը
գիտենք հոգեւոր իշխանութիւնը թույլ կը տա
թէ ոչ, թոյլ տալու մասին մենք չառ կասկա-
ծաւոր ենք ըստ որում նրան շատ լաւ յայտնի
է, որ սուրբ Յովհաննէս եկեղեցին իր Բագում
ունի մի այնպիսի լայնատարած պարտքէ, որոյ
մէջ կարելի է ոչ թէ մէկ, այլ եթէ կամենան
երկու հազարն ուսումնարաններ շինել իրենց
առանձին առանձին բազմոցով, եկեղեցին այս-
պիսի յարմարաւոր գետին ունենալուց յետոյ
միթէ անտեղի չէ եկեղեցական գումարը ի կո-
րուստ մատնել: Ինչպէս այդ գումարով կարելի
է նրա պարտքում չինել ուսումնարանների շի-
նութիւնը:

Ս.

ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

15 մարտի

«Մշակի» № 33-ում կարդացինք մի նամակ
Ալեքսանդրապոլից * * * ստորագրութեամբ, որ
մասին կամենում ենք մի քանի խօսք ասել:
Մեղ երևում է, որ պ. նամակագիրը իր այդ
գրութեամբ բուն նպատակ է ունեցել արտա-
ւորել մեր քաղաքի ուսուցչական խմբի գոր-
ծունեութիւնը, թափել է իր սրտի մաղձը նորա-
վրա և աշխատել է լքան կարելի է նրա ու-
նեցած վարկն ու համակրութիւնը պակասց-
նել հասարակութեան առաջ: Այդպիսի զգաց-
մունք արտայայտելը սովորական է միայն մեր
«անկեղծոցի» անդամներին, որի անդամներից
մէկն էլ գուցէ և պ. * * * ը լինի:

Ազնիւ մարդը երբէք պարտն չեմ անկապել նը-
կատողութեան նմանը չէր կարող ասել: Յայտ-
նի է, որ Սահակաւորուհի ուսումնարանը (որի
մէջ սովորում են քաղաքի չքաւոր դասակար-
գի օրիորդները ճիւղաբար) ահա քանի տարի է
բացված է ու գոյութիւն է ստացել միայն
մեր ուսուցչական խմբի շնորհիւ, — և նայելով, որ
սոքա (ուսուցչները) ամենքն էլ սիրով ձրիա-
բար մինչև այժմ դասախօսում են, ներկայա-
ցումներ են տալիս ուսումնարանի օգտին, դա-
նազան այցելուներից նուէրներ են հաւաքում,
այնուամենայնիւ հողէլ է գոյացել մի չնչին
գրամադրութիւն, 3300 ռուբլ: Դա ինչ մեծ գումար
է, հարցնում եմ պ. * * *-ին, որի մէջ խոշի-
ձայնը կորուսած լինելով, ասում է «աշխա-
տում են հարստացնել նորա գանձարանը»: Կարելի
է այդ գումարը ապագայութիւն համարել
ուսումնարանի համար և հոյակապ պալատներ
վարձել նորան: Պ. * * * ասում է, ուսումնարանի
սենսակները անյարմար են, լաւ բայց միթէ
յայտնի չէ պարտնիւր որ Ալեքսանդրապոլում
այս երկու տարիներս պատերազմի պատճառաւ,
սենսակների սով էր, չէ որ ամիսը 5 ր. արժող
սենսակը 50 ռուբլով էլ չէր ձեռք ընկնում:
հարցնում եմ, ինչ էր պատճառը, որ պատե-
րազմի ժամանակ մեր բոլոր ուսումնարանների
դասաւորութիւնները դադարեցրին և հիւանդ-
ներով կամ վիրաւորվածներով լեցրին: Մենք
գիտենք, որ Սահակաւորուհի ուսումնարանի
վարչութիւնը, ինչ դժուարութեամբ կարողացաւ
ձեռք բերել այդ սենսակները, այն էլ բաւա-
կան քրէ՞ս տալով:

Եթէ դուք պ. * * * ուսումնարանի աշակերտու-
հիւների մէջ յառաջդիմութեան նշոյլ անգամ
չէք նկատել, դորա պատճառը այն է, որ այ-
ցել էք այնտեղ ոչ թէ բարեկամական, այլ
թշնամական աչքով նկատողութիւն անելու,
այն ինչ մենք ինքներս էլ եղել ենք այցելու,
բայց դուրս ենք եկել ուսումնարանից ուրախ
ու գնացուցել տպագրութեամբ: Բացի դորա
նից որքան էլ պակասութիւն նկատելիս չի-
նէիք, դուք տեղիք չուէիք արտայայտի, որով
հետեւ (ինչ էք տուել, որ ինչ էլ պահանջէք)
ուսուցչներից թէ որքան երախտապարտ են
ու շնորհակալ Ալեքսանդրապոլի աղքատ դա-
սակարդ մանաւանդ որ իրանց օրիորդներին
ճիւղաբար ուսուցանում են, ձեռագործութիւն
են սովորեցնում, դա յայտնի է արդէն նոյն
դէպի ուսուցչները ունեցած ջիւղ համակրու-
թեամբ: Միթէ յանցանք չէ պ. * * * որ փոխա-
նակ շնորհակալութիւն մատուցանելու ուսու-
ցիչներին, որոց շնորհիւ կրկնում եմ միայն դո-
ւութիւն ունի ուսումնարանը, դուք զանազան
անտեղի ու դատարկ նկատողութեամբ աշխա-
տում էք նոյն սիրտը կոտորելու: Եւ ինչս ոչ
հոգաբարձու եմ և ոչ էլ այն ուսումնարանում
օրիորդ ունեմ սովորող միայն որպէս ճշմար-
տաւէր քաղաքացի, պարտք եմ համարում ար-
դարութիւնը պաշտպանել:

Խօսելով հոգեւոր ուսումնարանի մասին, ա-
սում էք քաղաքի բերմամբ մասն երկրորդ դա-
սաւորներ, ուր երեցփոխութեան դաս էր բարե-
ցի անցանաւոր ուսուցչին, պատիւ ունեցայ ծա-

նօթանալ նորա հետ, զարգացած էր երևում,
բայց իւր արհեստում շատ աղէտ: Զարմանալի
բան, վերեւում ասում էք, եկեղեցում աշակերտ-
ները և աշակերտուհիները քաղաքա՞նայն եր-
գում էին, և այժմ էլ տգէտ էք անուանում եր-
գեցողութեան ուսուցչին իր արհեստում, ասա
նւմ շնորհիւ էին նոյն սովորել երգել: Մի
մոռանա՞ք, պարտն, որ ամենախելօք մարդը նա
է, որ ուրիշին յիմար չի անուանի: Ինչ երկար
քննեմ, ձեր վերջաբանը աւելի պարզում է սըր-
տիդ նպատակը: Ի դուր էք զանազան կերպով
աշխատում հոգաբարձութեան և ուսուցչների
մէջ ատկութեան սերմն ցանկելու, զանազան
տիւրը գոյներով նկարագրելով վերջիններեւ:
մենք լաւ ենք ճանաչում նորանց: Մենք յարգել
ենք ու կը յարգենք ուսուցչներին, քանի տես-
նում ենք նոյն մէջ անհասանէր օգի, աշխիւ
զգացմունք և ազդեցութեամբ գործունէութիւն:

Լ. Լ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ախալցխա, 21 մարտի

Մի քանի պարտնեիր վերջին օրերումս սկսե-
ցին Ախալցխայում կամաւոր նուէրք հաւաքել
յօգուտ Արարատեան ընկերութեան: Մինչև հի-
մայ հաւաքված փողի գումարը հասնում է 450
րուբլու: Բայց նուիրածողութիւնը մօտադիր են
այդ գումարը հասցնել մինչև 1000 ռուբլու, բայց
յայդմանէ դուք մտադիր են մի մշտական երե-
սուն անգամից բաղկացած ընկերութիւն կազմել
Ախալցխայում, այն նպատակաւ, որ իւրաքան-
չիւր տարի Արարատեան ընկերութեանը հա-
սուցանեն 500 ռուբլ: Այդ գումարը նոյն կար-
ծում են ստանալ թատրոնային ներկայացում-
ներից, վիճակախաղից, եկեղեցիներում և փո-
ղոցներում տարվայ որոշեալ ժամանակներում
զանձանակ մեծ ածելով, ընկերութեան իւրա-
քանչիւր անգամին պարտաւորեցնելով որ նա
իւրեան յարմար դատած այս կամ այն միջոցով
այսինքն իր բարեկամներից կամ ազգականներից,
հարաւորներից ու խնջողներից, մեռելախաղի և
երկոյսի միջոցով ժամանակ և աշխիւ հաւաքուր
նուէրք ժողովելով իւրաքանչիւր ամիս ընկերու-
թեանը մի որոշեալ գումար հասցնել: Եթէ ըն-
կերութիւնը իրան ընտրած այդ կամ այդպիսի
միջոցներով չը կարողացաւ իւրաքանչիւր տարի
վերադառնալ 500 ռուբլին մասամբ կամ ամբողջա-
պէս ժողովել, նա յանձն է առնում հանգանա-
կութեամբ իր անդամներից ստանալ այդ գո-
ւմար պակասորդը կամ բավո՞ղը: — Որովհետեւ
այդ կազմվելիք ընկերութեան անդամները իւ-
նեկու են քաղաքիս հայ հասարակութեան ամեն
զապալարացի անխորիւ և նոյն մեծ յոյս ունեն,
որ եթէ իրանք յանձնառու լինեն լոկ աշխատա-
ւոր, շատ հեշտութեամբ կարող են հապարակու-
թիւնից վերադառնալ գումարը անխափա՞ս ստանալ,
ուստի և պատշաճ են դատում, որ այդ գումարը
յանձնվի (Արարատեան ընկերութեանը) գլխա-
ւորապէս հեռակալ պայմաններով:

ա) Որ այդ գումարով երկսեռ ուսումնարան
կամ մի երկու երկսեռ նախակրթարաններ բա-
ցուեն Հայաստանում: աւելի լաւ եթէ լինի այդ
ուսումնարանը Տաւրոսում:

բ) Որ այդ ուսումնարանը կուլի Ախալցխայի
հայ հասարակութեան անունով:

գ) Որ Արարատեան ընկերութիւնը այդ ու-
սումնարանի թէ ուսումնական և թէ քրտեսա-
կան մասին մանրամասն հաշիւ տալ իւրաքան-
չիւր տարի Ախալցխայում կազմվելիք ընկերու-
թեանը: —

Իբրև միւր ժողովարաններից և կազմվելիք ըն-
կերութեան անգամակցելու պատիւն ունեցող,
ես, ըստ առաջարկութեան իմ ընկերների
գիմում եմ այսու «Մշակի» խմբագրութեանը
խնդրելով բարեհաճել օգնել մեզ իւր խորհուրդ-
ներով, որը կարող է լինել կամ մասնաւոր նա-

մակուկ կամ «Մշակի») միջոցաւ: Մենք խնդրում ենք
խմբագրութիւնից խորհուրդներ այն բանի հա-
մար թէ՛

ա.) Ինչպես է գտնում խմբագրությունը մեր վերադիակ մտադրությունը և այն պայմանները, որոնք մենք ուղղում ենք զգալի («Լրագրատեսան ընկերությունը»): Չունի արդեօք խմբագրությունը մի այլ բան առևտրային ու կամ պահպանային ու մեր ջանկարածանքները:

բ.) Այն մրցույցները, որոնք մենք ընտրել ենք իւրաքանչիւր տարի 500 բուլլի ժողովել, կարող են և բաւական են երաշխաւոր լինելու (Արարատեան ընկերութեան)՝ առաջ մեր վերոյշիշաւ մտադրութիւնը իրագործելու և ճշդութեամբ կատարելու։ — Զոռնի արդեօք խմբագրութիւնը աստիճանի իր իրողմից և այդ հարցի վերաբերու-թեամբ։

գ.) Ախալցխայում կաղնիքի բնկերութիւնը մասնաւոր թէ պաշտօնական կերպարանը ստանայ, եթէ հարկաւոր, գուցէ և անհրաժեշտ լինի ըստ պահանջման օրինայ, որ այդ բնկերութիւնը պաշտօնական կերպարանը ստանայ, յայն դէպս մենք կանոնադրութիւն մէակեկիս, Ռուսաստանում դռնիժող զանազան բարեգործական, բնկերութիւնների աւելի օրի կանոնադրութեանը հետեւնք:

Անստեղծ են, պարոն խմբագիր, այն հարցերը զլխանորապէս, որոնք մենք ցանկանում ենք, որ հրապարակւաւ արծարծվեն, պարզվեն և նսցաւ վրա զանազան կարծիքներ և դատողութիւններ լինեն, նախ քան թէ մենք կը սկսէինք մեր մտադրութիւնը իրադրօնել, չէնք զորաւմ մար էլ է որ մեր ժողովուն և ժողովակից զու-մարը մենք օրոշել ենք տակոսով չահեցնել առայժմ:

Յուսով ենք որ դուք, պ. խմբագիր, չեք զա-
նալ մեզանից ձեր խորհուրդները:

Այս նամակի մի օրինակը գրու՞մ եմ («Մեղուկ») խմբագրութեանը, բայց ցանկալի կը լինէր մեզ լսել և մեր մէջս պարբերական հրատարակութիւնները, այսինքն (Փորձի), «Մանկավարժական թերթի» և «Լրատրագի» նոյնպէս և է, Պօլսի աղ-գային թերթները ևս և ամեն ազգային ընդհա-նուր շահերին ցանկացող պարսններն կարծիք-ներն ու խորհուրդները:

၂၄၆.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երևան, 15 մարտի

Երևանի հայ կանանց հասարակությունը, ցանկացող մեր Տաճկահայ վշտալի ազգային երկին տառապանքներից և տրդիտություններից խաւարից, նուիրում են յօգուտ նրանց լուսաւորութեան 200 ռուբլի, որը նաւակիս նետ աղարկելով խանրատեալ խնդրում ենք ձեզ հաստատենի «Արարտեսն» ընկերութեանը» և տպել ձեր յարգելի «Աշակի» մէջ նուիրատուաց անունները, որոնք են Թ. Զաւահիր թայիրեան 20 ռ., Թ. Գեթեան Մելիք-Աղամասեանց 10 ռ., Թ. Սուրիայ Գեղամեանց 10 ռ. Թամարայ Աւաքեղեան 10 ռ., Մի ոմն Կիկին 10 ռ., Թ. Սուրիայ Մելիքեանց 10 ռ., Թ. Օլգա Երզնկեան 8 ռ., Թ. Աննայ Ղօրղաւեան 8 ռ., Թ. Տրուշին Ափրիկեան 5 ռ., Թ. Աննայ Մելիքեանց 5 ռ., Անյայտ ոմն 3 ռ., Իշխանուհի Թումանեանց 3 ռ., Թ. Սօնայ Նիկողայոսեանց 3 ռ., Թ. Եղիաւաբէթ Ալթունեանց 3 ռ., Թ. Աշխէն Եղիաւաբեանց 3 ռ., Թ. Սալօմէ Բակլազեանց 3 ռ., Թ. Աննայ Գաղամեանց 3 ռ., Թ. Կատարինէ Ալթունեանց 3 ռ., Թ. Անթաւամ Գաղեանեանց 3 ռ., Թ. Եղիկ Զովակիմեանց 3 ռ., Թ. Սիմոնեանց 3 ռ., Թ. Տրուշեանց 3 ռ., Թ. Ռուզեանց 3 ռ., Թ. Ովսանայ Արշակունեանց 3 ռ. Թ. Եղիսայ Գասպարեան 3 ռ., Տիկին Պօղոսեանց 3 ռ., Թ. Աննայ Անտոնեանց 3 ռ., Թ. Եւայեանց 3 ռ., Թ. Աննայ Տէր-Աւետիսեանց 2 ռ., Թ. Գէորգեան 2 ռ., Թ. Թաղեանտեանց 2 ռ., Թ. Մարիամ Անտոնեանց 2 ռ., Թ. Եղիաւաբէթ Զովաննեանեանց 5 ռ., Թ. Եփեմիայ Աբամելիքեանց 1 ռ., Թ. Սառան վարդապետեանց 1 ռ., Սալմէ Ղօրղանեանց 1 ռ., Սօփիայ Գէղարկաւեանց 1 ռ., վարվար Եղիազարեանց 1 ռ., Մարիամ Սուրգունեանց 1 ռ., Թ. Շողակաթ Զովաննիսեան 1 ռ., Թ. Թաղաւի Նալբանդեանց 1 ռ., Թ. Թաղաւի Շիմանց 1 ռ., Տիկին Տէր Խաչատուրեանց 2 ռ., Տիկին Խորասանեանց 1 ռ., Թ. Մարգարիտ Խանազատեան 1 ռ., Տիկին Գարիբեանց 1 ռ., Թ. Սոնայ Ղօրղաւեանց 3 ռ., Թ. վախտանգ Նայալով (վրացի) 5 ռ., Կ. Աղէքսանդր Բատումեան 2 ռ., Կ. Աղէքսանդր

Նխագիտան 1 բ., տ. Սարգսյանան 3 բ., տ. Ա. Տէր Յովսէփեանց 1 բ., տ. Ե. Էթեր Յովսէփեանց 1 բ., ամենը 202 բ., որից դուրս զալով փոստի ծախքը, ուղարկում ենք երկու հաւրիւր ռուբլի.

Տ. Անանիա Կօրղանեան, տ. Տիրուհի Մէլիք
Աղամալեանց, տ. Սալամէ Բակլաշեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ դրուա են ԱԼԷԻՄԱՆԻԲԱՊՈԼԻՑԻՑ. Վյա-
տեղ ղխաաորութիւն կայ մի տղայոց պրօզի-
նաղլա բանալ: Երկրաբործներէ խելցին վա-
րեկատղերը, որովհետե նոքա ամբողջ քաղաքին
են պատկանուտ: Տներն և խանութներն զները
հետղենէ բարձրորոտ են: Պաշարեղէները
բաւական էփան են»:

ՆՈՒՆՈՒՅ ՀԱՅ ՀԱՅՈՐՈՐԱՃ ԷՆ, ՈՐ ԱՆ ՍՈՓԻԱ
ՏԵՐ-ԳԱՆԻԷԼԻԱՆՈՐ ՀԱՄԱԶԵԼ Է ՎՅՈՒ 160 ԲՐՈՐԷԼ Է
ՍՈՄԱԴԵՐ Է ՎՅՈՒ ՎՈՐՈՐԵՐ ՂԵՂԵՐՈՅԻՆԵՐԻՆ ՈՐՀԱՐ-
ԿԵՐ ԶՐ ԳԵՐԱՆԵՃ ԲՆԷ ՃԱՄԸ ԿԱՄԱՐԱԵԼԻՆ ԽԻԿԻՆՐ
ԿԱՐՈՂ Է ԻՐԱԳՈՐԾԵԼ ԼԵՐ ՎՅՈՒ ՂԵՐԱՄԱՐՈՐԸԹԻՆՐ:

Մեզ հաղորդում են ՆՈՒՆՈՒՑ, որ այնտեղի
ուսումնաբարձի տեսչի և հոգաբարձու թեան մէջ
անբաւականութիւն է ծագել: Տեսուչը հրաժա-
րեցրած է իր պաշտօնից և շարունակում է վա-
րել միայն ուսուցչի պաշտօնը:

Մեզգ գրում են ԱՆԻՏՏԱՐԱՆԻ զեւղից հետեւեալը: «Այստեղ առեն մարդ թղթախաղով է զբաղված: Խաղում են մինչև անգամ տաս տարեկան երեխաներ: Օրերումս տաս տարեկան երեխան իր բոլոր փողերը տանուէ տալուց յետոյ, 20 կոպեկով գրաւ գրեց իր գլխարկը և այն էլ կորցրեց: Երեխան առանց զգեստիկ զնառուուն և ծնողները նրա վրա բռնորովին չը բարեացան:—Այս ասորի մկները գրեթէ ոչնչացրին Աւետարանի զիւղի շրջականերում գտնված արտերը: Մկերի համար պատմում են, որ նոքա բազմաթիւ խուճբերով եկել են Շամախու շըրջականերից և մի մի ծղնտո բերաններն առած անցել են կուր գետը:—Ուսումնարանի համար ստորագրութիւն է բացված, 200 տուն բնակիչներին հաղել 50 ստորագրով են: Պաօլ անուանված հիւանդութիւնը այս տարի չառ զոհեր տաւ: Բժշկի պակասութիւնը սաստիկ զգալի է: Կիւղացիները զո՛հ չեն իրանց վիճակից»)

ՏՐԻԲՈՒՆԻ մեր թղթակիցներից մէկը գահգառվում է, որ նամակը փակելուց, մարդան էպցոսն լուց և փոստային յանձնելուց յետոյ, նրա նամակները բաց են անվում և կարդացվում: Չը դիտենք որքան ճշմարիտ է այս լուրը: Վատ է՞ր լինի, որքէ՛ն Երեանի փոստային վարչութիւնը ուս-սիրտթիթին դարձնէր այդ նպագութիւնը վրա:

Մեզ հաղորդում են վ.վ.դ.ԱՐԾԱ.ՊԱՆՏԻՑ, որ այն-
տեղի երկսեռ դպրոցները շատ վատ դրության
մէջ են: Թղթակիցը լսել է, որ այս ուսումնա-
րանքների տեսչութիւնը այժմ յանձնել են խորէն
վարդապետ Ստեփանէին: Ը նա յոյս ունի, որ
ուսումնապատին հայրը կը բարեկարգէ յիշեալ
ուսումնարանների դրութիւնը:

Դերբիսեան հայոց ազգային-հոգեւոր դպրոցի հոգաբարձութիւնը կարգադրել է կատարել հոգեհանգիտ առաջիկայ ապրիլ ամսի 7-ին, Աւետեաց տօնին, Աւետիք փրօյհանցի գերեզմանի վրա, Սուրբ Դշան եկեղեցւոյ զաւթումը և 8-ին՝ նոր կիրակիէն օրը, Յովսէփ Էփենդեանցի գերեզմանի վրա, Վանքի եկեղեցւոյ զաւթումը, զկնի պատարադին։ Արժանայիշատակ հանգուցեալն իր նուիրել են Դերբիսեան դպրոցին, առաջինը՝ մի հոյակապ կուլտուածք և երկրորդն՝ մի նըշանաւոր գումար։

Գօհեռ. Ա. Բարայեանի հրապարակական դասարանութիւնը լինելու է ամսոյս 28-ին աւագ չորեքշաբթի օրը Արհեստագործների կուռքի դահլիճում, «Արքերի» արդեցութեան մասին մարդոս առօրեականութեան վրայ: Մի Ա. Գ. Կրքերի է ութիւնը և նշանակութեան վրայ իմացական փիլիսոփայութեան և բանասիրական—հոգեբանութեան հայացքներով: Մարդոս անդիտակցական հոգեկան կեանք և տեմպերամենտը, իբրև հիմունք կրքերի այս կամ այն աստիճան արտայայտութեան: Արքերի տեսակները և նոցա արդեցութիւնը կազմուածքի դանադան դործարանների

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԿԱԹՕԼԻԿՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Արևելեան կաթոլիկ Հայոց Պատրիարք Գրեգէրեան Յովհանն արքեպիսկոպոսին՝ իր պատրիարքութիւնը Բ. Գրան ձեռքը վերադարձնելով երթալ Հասուն գերապայծառին հպատակելու գէպը՝ նոր և դժուարին կացութիւն մը կը ստեղծէ, մեր կաթոլիկ հակահասունեան ազգայնոց համար, — որոյ վրայ խորհելու հրաւերուած է վարուան օրը իրենց երեսփ. Ժողովը, — միանգամայն ծանրակշիռ և լուրջ մտածման արժանի նոր պարագայ մը յառաջ կը բերէ մեզ Հայոցս համար, — առ որ մեր Հայոց ազգը գեռ բաւական պատ. ըստտուած չը տեսնուիր, ըլլամբիւն կատողութեան առջևն առնելու զայդ —:

Մենք մեր պաշտօնակցաց մէկուն պէս չենք ուզեր այնքան յառաջ երթալ Գիւրգէնեանի առ պապական աթոռն յայտնած հնազանդութիւնը՝ ձիզկէթութեանն իր համբաւոյն արժանի կատարած դործ մը հռչակելով, և միւս կողմէն չենք ուզեր, մանաւանդ թէ մեր ազգին լրջամտութեանն անարժան գործ մը կը համարիմք մեր Արեւելեան կաթողիկ ազգայիններն, որպէս թէ իրենց գանուած ներկայ դժուարին կացութենէն ալտաեղւո իրր ծանայ մը ցոյց տուած ըլլալու համար՝ զանոնք մեր Հայաստանեայց եկեղեցւոյ գիրկը հրաւիրելու արտօրայ:

Առանց առաջինը ծաղրելի քաղաքականու-
թյուն մն է, երկրորդն ալ աններելի անկր-
թւթիւն մն է, որոյ երկուքէն ալ հաւա-
սարապէս պէտք է խորշի:

Տարակիյա չը վերցնեիք իրողութիւն մ'է
այսօր թէ՛ Բիւրեւեանի այս արարքն ընել
տւող, և Հասուն գերապայծառն ալ Թուր-
քիոյ կաթոլիկ հայոց ընդհ. պատրիարք
հռչակելու ճանքան յարգարողն ու պատրաս-
տողը՝ ամենէն աւելի գաղղ. դեսպան Պ. Ֆուր-
նիէ եղած է, իւր կառավարութենէն ստա-
ցած հրահանգին համեմատ, նմանապէս ա-
նուրանալի իրողութիւն մ'է այսօր թէ՛
գաղղ. կառավարութիւնը ինչքան հանրա-
պետական և ի կրօնս ազատամիտ է Գաղղիոյ
երկրին սահմանին մէջը, այդ սահմանէն դուրս
մանաւանդ Թուրքիոյ մէջ ջերմ կաթոլիկ և
կաթոլիկութեան կրօնից ու շահույցը պաշտպան
ինքզինքը հռչակող կառավարութիւն մն է
Միւս կողմէն վերջին անցից բերմամբ՝ մեր ազ-
գին ալ Պ. Ֆուրնիէի և կամ ուրիշ ու է գաղղ.
դեսպանի մը հետ ունեցած և ունենալիք
յարաբերութեան վիճակին փափկութիւնն ու
Հասունի հետ գաղղ. դեսպանին ունեցած
քաղաքականութեան մտերմութիւնն ալ բա-
ցատրութիւն չը վերցնեիք իրողութիւն մն է,
ասոնց ամենը ալ միանգամայն ինկատի առ-
նելով, Գաղղիոյ ահեղութեան և իւր Կ. Պոլ-
սոյ դեսպանին ձեռքն ու ազդեցութեամբը
կատարուած դէպք մը՝ ճիգվիթութեան համ-
բաւոյն արժանի գործ մը հռչակելը՝ նոյն իսկ
մեր Հայոց ազգին արտաքին շահույց ալ վնաս-
աւար և անհեռատես քաղաքականութենէ
մը զատ ուրիշ բան չը կրնար ըլլալ:

Գայով մեր Արևելեան կաթողիկ տղայինս ներն՝ մեր Հայաստանեայց եկեղեցւոյ գիրկը վերադարձած տեսնելու ժամաքին և հրաւերին, զայս ալ անպատեհ կը դատեմք, զնձ ձգէ՛ն եկեղեցիդ և իմ եկեղեցւոյս ժարախը մտիր, և կամ Վճիղ կրօնքդ և իմ կրօնքս

ընդունէ՝ խօսքը՝ այսօրուան օրս քաղաքա-
կիրթ համարուող ազգաց առջևը դատա-
պարտել աններողութիւն մն է, զի կրօնը
ըստած բանը՝ խղճի և համոզման միայն
վերաբերել բան մը ըլլալով ով որ այ-
սօր խղճի և համոզման ազատութիւնը չը
յարգեր, նա քաղաքակիրթ ժողովուրդ կո-
չուելու արժանի չէ, և մենք Հայերն՝ որ ան-
ներողութիւնը յաւիտեան կը դատապարտենք,
չեմք կրնար ոնց իսկ մեր անձին վրայ այդ
աններողութեան օրինակը տալ, հրաւիրելով
զայլ՝ որ թողով կրօնքնին գան մեր կրօնքն
ընդունին:

Գիտեմք և կը հաւատամք թէ այս հրա-
ւերը՝ անհերոգութեան ոգւով չէ եղած, այլ
տղգային միութիւնը աւելի ստուար, հոծ և
ամփոփ առնելու նպատակաւ է. բայց ի՞նչ
օգուտ որ այդ նպատակին հասնելու համար
մտածուած այդ ճանքան այսօր բոլորովին
սխալ ճանբայ մ'ըլլալէն զատ, նաև բազ-
ձացեալ նպատակին ալ բոլորովին հակառակը
յառաջ բերելու կրնայ նպատակը Ազգային
միութեան նպատակը եթէ մեզ մի քանի
սխալ ճանբայներու մէջ առաջնորդած է, ա-
ստիցմէ մէկն ալ կրօնի կամ եկեղեցւոյ մի-
ութեամբ ազգային միութեան հասնելու հա-
մար մտածուած կամ դործադրուած միջոցն
է, և այսօր պատմութիւնը բաւական է ցոյց
տալու մեզ թէ՛ կէս դարէ ի վեր այդ նպա-
տակաւ կատարուած փորձերը ի՞նչ արդիւնք
ունեցեր են, ոչ այլ ինչ՝ բայց եթէ բաղձա-
ցեալ նպատակին հակառակ՝ անջատումն ու
բաժանումը այսօրուան օրս աւելի մեծցած,
զօրացած ու շեշտուած է, քան զոր էրն
ասկէ կէս դար յառաջ:

Հնաեւաբար այսքան ինչ փորձառութիւնը բաւական է դառ մ'ըլլաւ և համոզել զմեզ թէ՛ ազգային միութեան նպատակին հասնելու համար՝ մի և նոյն ազգէ հասարակութեանց մէջ կրօնքի կամ՝ եկեղեցւոյ միութեանէն զատ ուրիշ տեսակ խարսխադիժ և սկզբնակէտ (բօան տը տէբառ) մը հարկ է բնութիւն, ազգային միութիւնը, փոխանակ կրօնի և խղճի միութեան մէջ որոնելու, աւելի մտաց, սրտի և գաղափարաց միութեամբ և՛ կրօնական ներողամտութեամբ ջանալու է ձեռք բերել, կաթիլիկ ազգայնոց համար այսօրուան օրս յառաջ եկած իրաց կացութիւնը՝ բարեպատեհ առիթ մն է ցոյց տալու թէ՛ Հայոց ազգը համոզուած ըլլալով այս ճշմարտութեան, աւելի ազատագրի և ներողամիտ դիրք մը բռնելու պատրաստ է իւր կաթիլիկ ազգայնոց նկատմամբ։

Իսկ թէ ի՞նչ է Հայոց ազգին բռնելիք
դիրքը:

Զայդ ըսելէ առաջ՝ Արևել-կաթոլիկ Հայոց
այժմու գտնուած կացութիւնը պէտք է մի-
անգամ աչքի առջև ունեննայ:

Այս ժողովուրդին ասկե՛լ քանի մը տարի առաջ, պապական իշխանութեան իր ազգային կրօնական ներքին գործոց մեջամտութիւնը տեսնելով, մերժեց զայդ, և Պապին հօգեւոր գլխաւորութիւնն ընդունելով հանդերձ, չուզեց ծանօնել նրա իրաւասութիւնը իր ներքին գործոց վրայ, ուստի և առանձնանալով զառ կրօնական կաթողիկ հասարակութիւն մ'եղաւ, իր կաթողիկոսոյնն ու պատրիարքոյն, այսինքն իր հօգեւոր գլխոյնն ու քաղաքային գլխովը, օրոցմով կը կատարէր ու կը տեսնէր իւր թէ կրօնական և թէ քաղաքայի գործերը:

Պապականութեան սոյն միջամտութիւնն
Սերւելեան կաթողիկ հայոց զգացած այս խոր-
շու մնն աննպատակ չլլլալէն զատ, ազգ-
զգացման մ'աւ գլոյշմն ու յատկանիւք իր կրէր:
Պապականութիւնը (չնմբ ըսեր կաթողիկոս-
ութիւնը, և այս երկու բառից իմաստի տար-
բերութիւնը չենք կարծեր որ զանազանողներ
և հասկցողներ չը գտնուին) պապականութիւնը
Թուրքիոյ կաթողիկ հայոց՝ իրենց ազգային

ընդուն ալ, սովորութիւնն ալ պատմութիւնն ալ, բառքն ալ մոռցնելու նպատակով, զառնար ընդունալ տաճիկ և բարբառով Ֆրէնկ և ըլլալու առաջնորդած էր, այսինքն պապականութիւնը Թուրքիոյ հայ կաթողիկոսներն աւելի հայութենէ օտարացնել նայած էր, այնպէս որ կաթողիկոս հայու մը երբ ինչ ազգէ լինելը կը հարցուէր, «կաթողիկոս եմ» կըսէր, բայց «հայ եմ» բառը թերան առնելէ կը խորշէր իրեն մահացու մեղքը:

Զայս ընել տուողը կաթողիկոսները չէր, այլ պապականութիւնը, զի Գաղղիոյ և Անգղիոյ մէջ ալ կան կաթողիկոսներ, որոնք ազգաւ «գաղղիացի» կամ անգղիացի եմ կըսեն, զի հոն պապականութիւնը ազգեցութիւն չունի, իսկ հոս այդ ազգեցութիւնը լիովին ի գործ դնելով հայը հայութենէ օտարացնել կը ներկայէր:

Ահա սոյն ազգամիտ և օտարացման առաջնորդող ներմանը մասամբ մը առաջին առնելու համար էր որ Արևելեան կաթողիկոս հայերն ալ կաթողիկոս ֆիւթով հանդերձ, պապական կղերին իրենց ամեն ներքին գործոցը միջամտութիւնը արգելեցին և մերժեցին, որպէս զի իրենց ազգ. ինքնուրոյնութիւնը կարենան պահպանել, և անոնց մեջ որք պապականութեան ներշնչութիւնն և ազգեցութենէն հեռի է ազատ ֆիւթած են կաթողիկոս ըլլալով հանդերձ, անոնց մէջ հայ ազգային զգացումներն աւելի վառ և կենդանի կը տեսնուին:

Արևելեան կաթողիկոս հայերն, իրենց յուսացած զօրութիւնն ու ստուարութիւնը չը գտնելով հանդերձ, դարձեալ կը շարունակէին իրենց ինքնուրոյնութիւնը պահպանել, երբ Քիւրթեանի ղեկավար բերաւ զերենք նորէն այն վիճակին մէջ ձգեց՝ յորում կը գտնուէին ի վերջոյ ի կոնկալէն առաջ: Իսկ անկէ ի վեր մինչև ցարդ կաթողիկոս հայը ղեկ յառաջ քալել մը առաջ էր ինքնուրոյնութեան:

Այն ատեն ինքն իրեն ոչ կաթողիկոս (հոգևոր գլուխ) ունէր և ոչ Պատրիարք (քաղաքային գլուխ), և երկուքն ալ ունեցաւ, իսկ այսօր ունի իւր կաթողիկոսը, որ է հոգևոր կամ կրօնական գլուխը, և կը պահպի իրեն միտակ Պատրիարք մը այսինքն քաղաքային գլուխը որ ներկայացնէ ղերքը Բ. Դրան առջև և իւր քաղաքային գործերը տեսնէ:

Արևելեան կաթողիկոս հայերն, ինչպէս վաղուան երեսփ. ժողովին մէջ պիտի տեսնուի պիտի աշխատին և բոլոր ձեռքերն պիտի թափեն որ իրենց համար Քիւրթեանի տեղ նոր Պատրիարքի մը ընտրութեան հրամանն ստանան, և կամ մինչև նոր պատրիարքի մը ընտրութիւնը քաղաքային գործերն տեսնելու համար՝ տեղապահ մը անուանելու հաւանութիւն առնուի Բ. Դրանէ: Եթէ իրենց այս ձգտել և վորձոյն մէջ յաջողին՝ լաւ, զի դարձեալ ինքնուրոյնութիւնն պահած կըլլան, իսկ եթէ չը յաջողին, և յաջողեն ալ կասկածելի է, այն ատեն դժուարին կացութեան մը մէջ կ'ընան, զի իրենց համար ղերենք Բ. Դրան առջև ներկայացնող և քաղաքային գործերն տեսնել յանձն առնող Պատրիարքարան մը որոնելու պիտի ստիպուին:

Ահա այս Պատրիարքարան որոնելու հարկադրեալ կաթողիկոս հայոց կացութեան առաջին է՝ որ մեզ հայոց համար ալ նոր պարագայ մը և լուրջ մտածութեան արժանի վիճակ մը յառաջ կը գոյ թէ, ինչ ղերք բռնելու ենք մեր կաթողիկոս ազգայնոց առաջը:

Ըսինք թէ ասոնց այժմու պէտքը աւելի քաղաքային է քան թէ կրօնական. արդ քաղաքային պէտք մ'ունեցող ժողովրդեան մը՝ կրօնական պայման կամ դաւանութեան միութիւն մը առաջը դնելէն աւելի անքաղաքակիրթ և աննրբել վարմունք մը չը կրնար ըլլալ: Տարակոյս չը կայ որ եթէ հա-

սուն կաթողիկոս պատրիարք՝ հոչակուի, Արևելեան կաթողիկոս հայերն իրեն իրեն Պատրիարք՝ այսինքն քաղաքային գործոց գլուխ դիմած ատեն՝ նա ամենէն առաջ իրեն կրօնական իրաւասութեանը հպատակելու և հրահանգելու կրօնական պայմանը յառաջ պիտի դնէ:

Արդ, ահա հոս է խնդիրը, մեր հայոց Պատրիարքարանը ինքնին պիտի ունենայ այդ ազատամտութիւնը, որ իրեն դիմելու հարկադրող հասարակութեան մ'առանց կրօնական պայմաններն ինչպիսիք ընելու, զանի Բ. Դրան առջև ներկայացնելու և իւր քաղաքային գործերն ալ անխորտ տեսնելու և կարգադրելու պատրաստ և յօժար ցոյց տայ ինքզինքը, ճիշդ ինչպէս որ Բ. Դրան առջև կը ներկայացնէ վստահութիւնն ու խնայականութիւնը (որք ներստորական ըլլալովն հանդերձ՝ որք մեր հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութենէն չեն և իրենց յատուկ կաթողիկոսն ու պատրիարքը ունին) դարձեալ մեր Պատրիարքարանին միջոցաւ կը տեսնեն ու կը կարգադրեն իրենց քաղաքային (այն է քանչէրեւային վերաբերեալ) գործերը:

Սակ իբրև օրինակ յառաջ կը բերուի, հաստատելու համար թէ՛ ժողովրդեան մը մենէ եկեղեցիով կամ կրօնքով բաժնուած ըլլալը՝ իրական արդիւք մը չը կրնար ըլլալ պատրիարքարանով, այսինքն քաղաքային գործոց վարչութեան մէջ միանալու, բաւական է որ մեր Պատրիարքարանը, ինչպէս յատուկ գրասենեակ մը բացած է մենէ ազգաւ, կրօնքով և հոգևոր իրաւասութեամբ տարբեր Ասորիին ու Խալդիին քաղաքային գործերը տեսնելու, նորա եկեղեցւոյն չը միջամտելով, նոյնպէս ալ Արևելեան-կաթողիկոս հայոց համար ալ յօժար գտնուի յատուկ գրասենեակ մը սահմանել, ասոնց կրօնական գործոցն բնաւ չը միջամտելով, սոսկ քաղաքային գործերն տեսնելու և կարգադրելու համար, ճիշդ ինչպէս կըլլար դարձեալ ասէլ կէս դար առաջ, որ ատեն կաթողիկոս հայերն ալ հիմա-կուրնէ ոչ նուազ կաթողիկոս էին: Ազգային միութեան հասնելու աւելի ազատամիտ ճանքն ալ սա է, և ժամանակիս լուսաւորութիւնն ու քաղաքակիրթութիւնն ալ զայս կը պահանջեն մեր հայոց ազգէն, իբրև իւր ընթացիկութեանը, խոհալանութեանն ու ազգաբնութեանը արժանաւոր ընթացք մը:

Կաթողիկոս ազգայնք ասէլ տակաւին մինչև 15 օր կրնան սպասել իրենց նոր պատրիարքի կամ տեղապահի մը ընտրութեան փորձոյն արդիւք տեսնելու, իսկ անկէ անդին անհնար է իրենց այլ ևս սպասել զի քաղաքային գործերն սպասել չեն դիտել, այլ հոն կը դիմեն ուր որ կրնայ տեսնուիլ այդ գործերը:

Ահա այս ծանրակշիռ միանգամայն և փափուկ պարագայն յառաջ կը գայ նա ևս մեզ համար, զոր այսօրուրէն մեզ, մեր Պատրիարքարանին, ազգ. վարչութեան և երեսփ, ժողովոյ ուղղորդութեանն ու նկատողութեանը կը յանձնարարուի, առ որս հաւանական է թէ մօտ օրէն ներկայանայ այսպիսի խնդիր մը, որոյ առաջը մեր անպատրաստի կամ տարօրէն գտնուելէն աւելի անպատրու և նուազ-տացուցիչ բան չը կրնար ըլլալ մեզ համար:

(«Մէծմուտայի Հաւատարմ»)

ԳԵՐՄԱՆԻԱ

Այս օրերս Բիւսմարկեան գրականութեան վրա, — ինչպէս ասում են Գերմանացիները — մի նոր բրոշուր էլ աւելացաւ. բրոշուրի վերնագիրն է իշխան Բիւսմարկը և նրա դարը: Այս բրոշուրի հեղինակը «Post» լրագրի խմբագիրներէն մէկն է. նրա անունն է Հերման Կլէ, և եթէ մի կողմը գնենք հեղինակի գէպի իր հերոսը ունեցած անչափ սէրը, որը իր ծայրայեղ չափազանցութեամբ գրեթէ

երկրպագութեան է հասնում, մարդ կարգաւոր այդ բրոշուրը, ակամայ կարծում է թէ «Նախ լրագիր» թերթը կամ թէ մի որ և է ուղղափառ եկեղեցական լրագիր է կարգում: Կրօնում ինչպէս և փիլիսոփայութեան մէջ, պ. Կլէ ընդունում է հաւատը, աստուածատեությունը և հմայութիւնը, բայց նա հերքում է առողջ գաղափարները և գիտությունը. քաղաքականութեան մէջ նա ընդունում ու պաշտպանում է ժողովրդական աւանդութիւնները, բայց հերքում ու պախարակում է յեղափոխութիւնը. իշխանութեան վերաբերութեամբ նա ընդունում է Աստուածային կամքի զօրութիւնը, և հերքում է ժողովրդի կամքը: «Հաւատի մի գաղափարը, ասում է նա, բաւական է ժողովրդի ամբողջ կենսութեան տիրապետելու: Յեղափոխութեան այն մեծ սաղնապը, որ այսօր յուզում է ամբողջ Գերմանիային, և որին շուտով մենք միայն իբրև մի երազ, մի լոկ պատմական անցք կը յիշենք, ամեն կրիտիկա, ամեն քաղաքական և կրօնական ազատամտութիւն, և այն բոլոր ձգտումները դէպի անհատական ազատութիւնը, հաւասարութիւնը և ժողովրդի և նրա ներկայացուցիչների բարձր նշանակութիւնն ու ազդեցութիւնը, որոնք զանազան ճարպիկ կուսակցութիւնների շնորհիւ այնքան ոյժ ստացան Գերմանիայում, և մինչև անգամ ճշմարտութեան տեղ ընդունվեցան, այս բոլորը վերջապէս տեղի տուին ու ոչնչացան իշխան Բիւսմարկի ազգային, միապետական և քրիստոնէական գաղափարների առաջին Վերջապէս պատուելի Կլէ իր բրոշուրը վերջացնում է ասելով, որ իշխան Բիւսմարկ այն բժիշկն է, որ այնքան հարկաւոր է մի այսպիսի հիւանդ դարին, նա իր ժամանակի փրկիչն է, նա օրինակ է ապագային...»

Անշուշտ «բժիշկ», «փրկիչ», «օրինակ» խօսքերը ծայրայեղ չափազանցութիւն կարելի է համարել իշխան Բիւսմարկի համար, բայց մի բան կարելի է արգար խղճմանքով ասել այդ մարդու մասին, այն է, որ եթէ Ֆրանսիան պատմութեան առաջ պարծենայ իր մեծ յեղափոխութեամբ, դրա փոխարէն էլ իշխան Բիւսմարկ կարող է պարծենալ ամբողջ Եւրոպայի առաջ իր միապետական յեղափոխութեամբ, այն միապետական յեղափոխութեամբ որ մեզ ակամայ յիշեցնում է Մանտօֆֆէլէի և Ստաշիի ժամանակները:

«National Zeitung» լրագիրը պատմում է սօցիալականների պարագլուխ երեւելի Հայնրիխ մահուան տարեդարձի հանդէսը. հանդէսը կատարվեցաւ Բերլինում մարտի 13-ին: Սօցիալականների այդ ցուցմունքը ամենականօնաւոր և ամենախաղաղ կերպով վերջացաւ Հարիւլստոր մարզիկ, կանայք, երիտասարդ աղջիկներ ու տղայք կարմիր ժապաւեններով զարդարած պատկեր էին դնում գերեզմանի վրա. վերջ յիշած լրագիրը ասում է, որ այդ պատկերի թիւը այնքան շատ էր, որ գերեզմանը 1 1/2 արշին բարձրութեամբ ծածկուած էր պըսակների ահագին քանակութեամբ:

Գերմանիայի յետագէմ կուսակցութիւնը ուղղափառ կղերականների ու բարձրագոյն աւանդականների հետ միասին բողոքում են, որ մարմնական պատժի օրէնքը վերահաստատվի: Նրանց կարծիքով միայն ծեծը կարող է սանձ դնել կոպիտ ամբուխ շարամուտիւններին, որոնք առաջ են գալի զանազան սօցիալական ազատամտութիւններից, և որոնց համար բանտը աւելի մի ապաստանարան է քան թէ մի ուղղիչ հիմնարկութիւն, բանտարկւածներից շատերը աւելի հանգստութիւն են վայելում այդ բանտերում քան թէ իրանց նեղ ու խոնավ կացարաններում: Այս բողոք հանձնարը ծնունդ են միայն երկու կըղերական լրագիրների:

Ազատամիտ լրագիրները մինչև անգամ արժան էլ չեն համարում դրանց որ և է պատմական տալու:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱԶԳՈՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԲԵԼԳԻԱ, 22 մարտի (3 ապրիլ): Անգլիայի և Ներքիայի մէջ կայացած առևտրական դաշնագիրը հաստատվեցաւ. այդ դաշնագրի հիման վրա Ներքիան այսօրվանից դադարեցնում է անգլիական հիւպատոսարանի հետ ունեցած իրաւարանական գործողութիւնը: Նիշ և Լէսփօլաց քաղաքները լքցված են անգլիացի առևտրական գործակատաներով:

ՅԷՏԻՆԷ, 22 մարտի (3 ապրիլ): Զէրնօ-գորիայի իշխանը Ներքիայի Միլան իշխանից ստացաւ ճակօղայի պատուանշանը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մարտի: Այսօր կը հասնեն այստեղ գնեցրալ Տօւլէբէն և իշխան Իմէրէթիսկին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մարտի: Այսօր երեկոյան Տօւլէբէն և իշխան Իմէրէթիսկի հասան այստեղ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 կ., երկրորդ 96 ռ. 25 կ., երրորդ 96 ռ., չորրորդ 96 ռ. 25 կ., ներքին 5% տոմսերն փոխառութեան տոմսերը արժէ 237 ռ. 50 կ., երկրորդ 233 ռ. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսերը 93 ռ. 50 կ., երկրորդ 93 ռ. 62 կ., ոսկի 8 ռ. 41 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 23,43 պէսու: Ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 200 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 247 ֆրանկ:

ԼՕՆԴՈՆ, 23 մարտի (4 ապրիլ): Համայնքների ժողովում Բօրկ պատասխանելով Կօմբերնին, ասաց թէ կառավարութիւնը իմացել է, որ Ֆրանսիան տիրել է Մատանիզ կղզուն, բայց գնեցրալ Ատարնէլ Ֆէրրա Լէօնէ բողոքեց այդ լուրի դէմ, բրիտանական կառավարութիւնը այս պատճառով բողոք ներկայացրեց Ֆրանսիական կառավարութեան:

ՊԵՏ, 23 մարտի (4 ապրիլ): Ունգարացոց ներկայացուցիչների ժողովում Տիսսա արևելեան Իւմէլիայի հարցի վերաբերութեամբ պատասխանել, որ բանագնացութիւնները, որովհետև դեռ շարունակվում են, ուստի նա ոչինչ չէ կարող հաղորդել այդ հարցի վերաբերութեամբ, մինչև որ հարցը չը ստանայ մի որոշ վճիռ: Բանագնացութիւնների մէջ պարզ երևում է այն իրողութիւնը, որ Անգլիան է զլխաւոր դեր խաղացողը: Աւստրո-Ունգարական պատգամաւորների ժողովը յայտնեց, որ նրա բոլոր ձգտումներն ու բաղձանքն այն է որ Բէրլինի դաշնագիրը իրագործվի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 մարտի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Բարձրագոյն հրամանով կարգադրված է, որ եկող ուսումնական տարվայ սկզբից սկսած մեղիօ-խիւրդիական ձեմարանը պէտք է անուանափոխվի, և պէտք է մասնաւոր զինուորական բժշկական ձեմարան դառնայ: Բողոք ուսանողների թիւը այդ ձեմարանում նշանակված է 500 հոգի, դրանք բոլորն էլ թոշակաւորներ կը լինեն, և իւրաքանչիւր տարվայ համար, որ նրանք կը մնային ձեմարանում, նրանք պէտք է պարտաւորվեն տարի ու կէս ծառայել այդ ձեմարանը կունենայ միայն երեք կուրս, որովհետև երկու ստորին կուրսերը բաց են թողնուած: Զինուորական բժշկական ձեմարանում կընդունվեն այն ուսանողները, որոնք աւարտած կը լինեն համալսարանի բժշկական և կամ բնագիտական մասնի առաջին երկու կուրսերը: ձեմարան մանող ուսանողները որոշված երգում են ընդունում: Բարձրագոյն հրաման է մի յանձնաժողով կազմել որպէս զի նա քննէ հարկահանութեան այն ծրագիրը, որի մէջ առաջարկված է փոխել ներկայ գլխահարկ ժողովելու սխեման, և նոյն իսկ հարկը լրացնել կայսերական եկամուտների ուրիշ աղբիւրներից: Թանձնաժողովի նախագահը, ֆինանսների միւնիստրը կը լինի, որին իրաւունք է արված հրաւիրել մասնագէտ անձինքներ յանձնաժողովի աշխատութիւններին մասնակցելու:

ՎԵՐՍԱՅԼ, 24 մարտի (5 ապրիլ): Սէնտոր ընդունեց այն առաջարկութիւնը, որով կառավարութեանը խնդրում էին 3000,000 ֆրանկի կրէդիտ բաց անել, ծածկելու այն ծախսերը, որ պատճառեցի թողութիւնն ստացած քաղաքացիների հարկերը վերադառնալու: Սէնտոր նիստերը յետաձգվեցան մինչև մայիսի 8-ը, իսկ պատգամաւորների ժողովը նիստերը—մինչև նոյն ամսվայ 15-ը:

Խմբագիր—Հրատար. ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

